Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը

Հաստատություն՝ ք. Երևան հ.122 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Նելլի Պողոսյան

Ղեկավար Ավետիսյան՝ Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4
1. Սաների իրավունքները , արժանապատվությունը և պատիվը 6
2. Երեխայի հիմնական իրավունքները 9
3. Երեխայի իրավունքները նախադպրոցական կրթության ոլորտում 12
Եզրակացություն 18
Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Երեխայի իրավունքները մարդու իրավունքների և ազատությունների համատեքստում հիմնարար և առաջնային նշանակություն ունեն: Երեխաները բոլոր ժամանակներում և հասարակարգերում մշտապես հանդիսացել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը: Հայտնի է նաև, որ երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են: Եվ կախված նրանից, թե որքանով են պաշտպանված երեխաների իրավունքները, կանխորոշվում է նաև տվյալ պետության և հասարակության ապագան: Երեխայի իրավունքերի և շահերի պաշտպանությունն ու ապահովումը հանդիսանում են ինչպես միջազգային-իրավական, այնպես էլ յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից: Երեխաների իրավունքների իրավական պաշտպանության անհրաժեշտությունն ի հայտ է եկել մարդկային պատմության արհավիրքների արդյունքում, որի ընթացքում երեխայի իրավունքները համատարած ոտնահարվել են: Դրա ապացույցն են 20-րդ դարի հայտնի բժիշկ, մանկավարժ Մարիա Մոնթեսսորիի ուսումնասիրությունները, համաձայն որոնց «երեխան մեծահասակի վերարտադրությունն է, որը տնօրինում է նրան այնպես, ասես երեխան լինի իր սեփականության մի մասը: Ստրուկը երբեք այդպես չի պատկանել իր տիրոջը, ինչպես երեխան ծնողներին»[1]:

Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը ստեղծեց երեխայի նկատմամբ վերաբերմունքի նոր մոդել, որը ելակետ հանդիսացավ ընտանիքում և հասարակության մեջ երեխայի կարգավիճակի փոփոխության համար: Միջազգային իրավական բազմաթիվ այլ ակտերով ևս ամրապնդվեցին երեխաների իրավունքների պաշտպանության սկզբունքները և չափորոշիչները, որի մասին կմանրանամասնենք աշխատանքի հետագա շարադրանքում:

Երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) ևս համարվում է առաջնահերթ լուծման խնդիր:

---

[1] Տե՛ս Богусловский М. В., Користов Г. Б. Антология гуманной педагогики, - М.,1999, էջ 90-91:

Հետազոտության հիմնական ***նպատակն է*** ամփոփ անդրադառնալ ՀՀ-ում սաների իրավունքների, շահերի, պատվի և արժանապատվության հիմնախնդիրներին: Այդ նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք ***հետևյալ խնդիրները՝***

- անդրադառնալ սաների անձնական, սոցիալական և այլ իրավունքներին ու ազատություններին
- ուսումնասիրել սաների իրավունքների ապահովման ու պաշտպանության հետ կապված հիմնախնդիրները:

1. Սաների իրավունքները , արժանապատվությունը և պատիվը

Երեխաների իրավունքները բխում են մարդու իրավունքներից և դա նշանակում է մեծահասակների գիտակցված պատասխանատվությունը երեխաների կյանքի, զարգացման և կենսագործունեության համար: Այսօրվա երեխաները վաղվա աշխարհի քաղաքացիներն են, և նրանց լիարժեք կյանքը հանդիսանում է ապագայում մարդկության զարգացման պարտադիր պայմանը:

Մարդկային հասարակության քաղաքակրթությունը վաղ ժամանակներից է դրսևորվել նրա ամենաթույլ անդամների պաշտպանության մեջ, որոնց շարքին էին դասում ծերերին, կանանց և երեխաներին:

Երեխաների իրավական հատուկ պաշտպանության անհրաժեշտությունը ճանաչվում է միջազգային և ազգային իրավական մի շարք փաստաթղթերի կողմից՝ հաշվի առնելով երեխաների ֆիզիկական և մտավոր անչափահասությունը:

Երեխաների իրավունքների խնդիրը ժամանակակից աշխարհում կենտրոնական տեղ է զբաղեցնում: Դրանում են արտացոլվում կենտրոնացված ձևով հասարակության քաղաքական կառուցվածքի էությունը, և պետական իշխանության և հասարակական իրավապաշտպան կազմակերպությունների գործունեության բովանդակությունը, ուղղվածություն և արդյունավետությունը:

Երեխայի իրավունքների անշեղ պաշպանությունը գործնականում ցանկացած հասարակության ժողովրդավարության, մարդասիրության և քաղաքակրթության հիմնական ցուցանիշն է: Առանց երեխայի իրավունքների նկատմամբ հարգանքի անհնար է իրավական պետության գոյությունը: Յուրաքանչյուր պետություն, եթե ցանկանում է քաղաքակիրթ համարվել, պետք է հատուկ պետական քաղաքականություն իրականացնի երեխաների և ընտանիքի նկատմանբ: Այս պետական քաղաքականությունը պետք է ներառի իրավական, սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, տարածքային, հոգեբանամանկավարժական և այլ ուղղություններ: Այն պետք է կրի համալիր բնույթ:

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության հիմնախնդիրը արդիական է ժամանակակից փուլում: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ բազմաթիվ հետազոտողներ իրենց աշխատանքները նվիրել են երեխայի իրավունքների հիմնախնդիրներին:

Ժամանակակից գրականության մեջ առավել մեծ ուշադրություն է հատկացվում այն հարցերի ուսումնասիրությանը, որոնք կապված են երեխաների իրավունքների պաշտպանության հետ: Օ.Իլյինան նշում է, դա կապված է նրա հետ, որ իրեն բնորոշ օբյեկտիվ առանձնահատկությունների հետևանքով երեխան ոչ միշտ է գիտակցում իր շահերը, և ոչ միշտ է ընդունակ համապատասխան գնահատել իր արարքները: Երեխան կարող է ընդհանրապես ճիշտ չհասկանալ իր շահերը[2]:

Գ.Ի.Իվանովը, վերլուծելով երեխայի իրավունքների պաշտպանության խնդիրը ընդգծում է, որ երեխաները բնակչության ամենաանպաշտպան և որոշ դեպքերում ամենաբարձիթողի շերտերից մեկն են[3]:

Գիտնականները նշում են, որ երեխայի իրավունքներն իրենցից ներկայացնում են համամարդկային արժեք: Ներկայումս երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ լայնածավալ գործունեություն է ծավալում ՄԱԿ-ը և նրա կազմում գտնվող Երեխայի իրավունքների հանձնաժողովն ու Մանկական ֆոնդը՝ ՅՈՒՆԻՍԵՖԸ:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կարևորագույն միջազգային փաստաթուղթը Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան է, որն ընդունվել է 1989թ-ին և որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ներկայումս, ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանությանը հատուկ ուշադրություն է դարձվում: Երեխան ծննդյան պահից ձեռք է բերում մի շարք իրավունքներ, որոնք պաշտպանված են ինչպես միջազգային պայմանագրերով, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է բազմաթիվ միջազգային պայմանագրերի, որոնք առնչվում են երեխայի իրավունքների պաշտպանությանը (Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, Կոնվենցիա երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին, Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիա, Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիա, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝

[2] Տե՛ս Ильина О.Ю. Об определении интересов ребёнка как семейно-правовой категории // Государство и право. - 2005. - № 11. - էջ 76:

[3] Տե՛ս Иванов Г.И. Права человека. - М., 2004. էջ 102:

մանկավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն և այլն), ինչպես նաև ընդունել է մի շարք ներպետական օրենսդրական ակտեր, որոնց թվում են՝ Երեխայի իրավունքների մասին օրենքը, Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին օրենքը, Ընտանեկան օրենսգիրքը և այլն: Օրենսդրորեն նախատեսված են նաև երեխաների իրավունքների պաշտպանության ազգային և մարզային հանձնաժողովներ և խնամակալության ու հոգաբարձության մարմիններ:

Երեխայի իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարելի է նշել նաև այն իրավունքները, որոնք նախատեսված էին ՀՀ Սահմանադրությամբ մինչև սահմանադրական փոփոխությունները, ինչպիսին են, օրինակ, երեխայի աշխատանքի իրավունքը, ինչը գործող սահմանադրությամբ ևս 16 տարեկան է, իսկ մինչև այդ տարիքը երեխային մշտական հիմունքներով աշխատանքի ընդունելն արգելվում է:

Սահմանադրությունը կարգավորում է նաև ծնող-երեխա հարաբերությունները, մասնավորապես 36-րդ հոդվածը սահմանում է, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին: Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:

ՀՀ Սահմանադրությունն անդրադառնում է նաև երեխաների քաղաքացիության հարցին, 47- րդ հոդվածն ամրագրում է, որ ՀՀ քաղաքացիներից ծնված երեխան ՀՀ քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, ունի ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

2. Երեխայի հիմնական իրավունքները

Երեխաների իրավունքների երաշխիք ասելով հասկանում ենք այն իրավական միջոցները, որոնք ապահովում են երեխայի այս կամ այն իրավունքի իրացումը: Իրավունքի իրականացումը կարող է ապահովվել, առաջին հերթին այն դեպքում, երբ այդ իրավունքին համապատասխանում է ինչ որ մեկի պարտականությունը: Այս տեսանկյունից երեխայի իրավունքներին համապատասխանում է պետության պարտականությունը, որի գործնական իրացումը միայն կարող է իրական երաշխիք հանդիսանալ երեխայի իրավունքների ապահովման համար:

Երեխաները պայմանավորված իրենց ֆիզիկական, մտավոր և հոգեբանական առանձնահատկություններով, կարիք ունեն հատուկ պաշտպանության և հոգածության, երեխաների նկատմամբ պետության հատուկ հսկողությունը դրսևորվում է այնպիսի միջոցառումմների կազմակերպման և իրավական նորմերի ամրագրման մեջ, որոնք կոչված են ապահովելու երեխայի աճի ու բարեկեցության բնական միջավայրը:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը սահմանում է երեխայի իրավունքները՝ պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները, ինչպես նաև կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:

Նշված օրենքը սահմանում է, որ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:

Երեխայի բնական և անօտարելի իրավունքներից է կյանքի իրավունքը: Դա նշանակում է, որ ոչ ոք, ո՛չ պետությունը (պետական մարմինները), ո՛չ անհատ քաղաքացիները չեն կարող կամայականորեն երեխային զրկել կյանքից:

Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու զարգանալու համար:

Երեխայի կյանքի պաշտպանությունն իրականացվում է մի շարք ուղղություններով: Դրանցից մեկը պետության համապատասխան քաղաքականությունն է:

Յուրաքանչյուր սովորող ունի առողջության պահպանման իրավունք:

Յուրաքանչյուր սովորող ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիների միավորումներին, այդ թվում՝ հասարակական, մանկապատանեկան կազմակերպություններին անդամակցելու, խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունք:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն սահմանվում է նվազագույն տարիք՝ հասարակական որևէ կազմակերպության անդամագրվելու համար, որը տասը տարեկանն է: Հետևաբար դրանից փոքր տարիք ունեցող որևէ երեխա չի կարող անդամագրվել որևէ կազմակերպության, հակառակ դեպքում այդ կազմակերպության գործունեությունը, օրենքի պահանջներից ելնելով, ուղղակի կդադարեցվի[4] :

ՀՀ-ը ճանաչում է երեխայի մշակութային իրավունքները: Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք: Յուրաքանչյուր երեխա ունի գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, մշակութային կյանքին մանակցելու, իր ունակություններն ու հետաքրքրությունները դրսևորելու իրավունք: Նշվածները կոչված են հաստատելու

[4] Տե՛ս Փիլիփոսյան Վ., Կարմիրշալյան Վ. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք/ մեկնաբանություններ. Երևան, Արեգ, 1998,էջ36:

պետության հոգատարություն և քաղաքականության ուղղվածությունը երեխաների նկատմամբ: Դրանից ելնելով դպրոցական երեխաների ուսումնական գործընթացին զուգահեռ գործում են նախադպրոցական և արտադպրոցական մշակութային և ստեղծագործական կենտրոններ, մարզադպրոցներ և այլ մանկապատանեկան հաստատություններ, որոնք հիմնականում ֆինանսավորվում են պետության կողմից:

Մշակութային իրավունքների դերը երեխայի կյանքում անգնահատելի է քանի որ մշակութային արժեքներն էապես ազդում են անհատի ձևավորման այնպիսի գործընթացի վրա, ինչպիսին սոցիալականացումն է: Այն իրենից ներկայացնում է անձի կայացման գործընթաց, երեխայի կողմից հասարակության պահանջների աստիճանական յուրացում, գիտակցության և վարքագծի ձևավորում:

Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողներին ճանաչելու և նրանց հետ համատեղ ապրելու իրավունք: Երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները, կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար: Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրիական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է:

3. Երեխայի իրավունքները նախադպրոցական կրթության ոլորտում

Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական տարիքի երեխաներն ունեն նախադպրոցական կրթություն ստանալու հավասար իրավունքներ:

Ծնողների կամ երեխաների օրինական ներկայացուցիչների ընտրությամբ երեխան կարող է նախադպրոցական կրթություն ստանալ՝

ա) նախադպրոցական ուսումնական հաստատություններում.

բ) ընտանիքում.

գ) անհատական մանկավարժական գործունեության միջոցով.

դ) նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնող այլ կազմակերպություններում՝ խնամքի, զարգացման, դաստիարակության եւ ուսուցման անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմանների առկայությամբ:

Նախադպրոցական կրթության ոլորտում երեխան իրավունք ունի՝

ա) մտավոր եւ հոգեկան զարգացմանը վնասող ցանկացած տիպի տեղեկատվությունից եւ քարոզչությունից պաշտպանվածության.

բ) բժշկական օգնության եւ սպասարկման.

գ) առողջությանը վնասող ցանկացած տիպի շահագործումից եւ ազդեցությունից, ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումից, արժանապատվության նվաստացումից պաշտպանվածության:

ա) Երեխայի՝ կրթությանն առնչվող հիմնական իրավունքները սահմանված են մի շարք միջազգային փաստաթղթերում և ամրագրված են ՀՀ օրենսդրության մեջ: Նկատի ունենալով դրանց մեծ ծավալը, ստորև ներկայացնում ենք միայն քաղվածք <<Երեխայի իրավունքների մասին>> ՀՀ օրենքից .

<<…***Հոդված 11.*** Երեխայի կրթության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի կրթություն ստանալու, իր, ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսեւորման, տաղանդի, մտավոր եւ ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական,

մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական եւ մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն:

Պետական համապատասխան մարմինները մշակում եւ իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության եւ կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Յուրաքանչյուր երեխա ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

Պետական համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի կրթության եւ մասնագիտական պատրաստության համար անհրաժեշտ տեղեկատվության եւ նյութերի տրամադրման մատչելիություն>>:

Բացի վերոնշյալ օրենքից ուսուցիչները պետք է ծանոթ լինեն նաև .....<<Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային>>, որի 28 և 29-րդ հոդվածները վերաբերում են երեխայի կրթության իավունքին: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ միայն կրթության իրավունքի իմացությունը բավարար չէ: Ուսուցիչները պետք է քաջատեղյակ լինեն երեխայի բոլոր իրավունքներին և իրենց ամենօրյա աշխատանքում նպաստեն դրանց իրացմանը՝ համագործակցելով ծնողների, ընտանիքի, մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխայի իրավունքների և կրթության բաժինների, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Հարկ ենք համարում երեխայի իրավունքների համատեքստում հատուկ անդրադառնալ ներառական կրթությանը, քանի որ մեր պետության կրթական քաղաքականության մեջ նրա դերն օրեցօր ավելի է կարևորվում և անհրաժեշտ է ուսուցիչներին նախապատրաստել ներառման գաղափարի իրականացմանը:

բ) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը. ներառական կրթության իրականացումը

Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը կարգավորվում է <<Կրթության

մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>, <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>>, <<Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքներով:

Հատուկ կրթական հաստատություններում և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում պետական աջակցությունից օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հետևյալ երեխաները.

ա) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչութային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաները,

բ) լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող և լսողության կորուստ ունեցող երեխաները,

գ) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլություն ունեցող երեխաները,

դ) մտավոր հետամնացություն ունեցող երեխաները,

ե) հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաները,

զ) հոգեբանական զարգացման խնդիրներ, ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող երեխաները,

է) վարքային և հուզակամային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաները:

Ներառական կրթության էությունը: Ներառական կրթությունը կրթության կազմակերպման ձև է, որը տարբերվում է հատուկ կրթական հաստատություններում *առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող* երեխաների համար առանձնացված ձևով իրականացվող կրթությունից: Այն հենվում է բոլոր երեխաների (այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող) կրթություն ստանալու իրավունքի և այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է: Ներառումը ենթադրում է այնպիսի գործընթացի ծավալում, որի նպատակը բոլոր սովորողների, այդ թվում հաշմանդամ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այլ անձանց կրթական կարիքների բավարարումն է: Կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող համարվում է այն անձը որի ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը և որոնց ուսուցման կազմակերպման համար պահանջվում են համապատասխան հատուկ կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, կենսագործունեության միջավայր, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայություններ՝ առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կողմից հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնար:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ներառական կրթական գործընթացի կառավարման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- Կրթական գործընթացում երեխաներին միմյանցից առանձնացնելու պատճառներ չկան.
- Չի կարելի երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել հաշմանդամության կամ սովորելու ընթացքում դժվարություններ ունենալու պատճառով:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում, դպրոցական ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում, դպրոցների վարած քաղաքականության համապատասխանեցում աշակերտների բազմազանու-թյանը և առանձնահատկություններին, ուսուցման ընթացքում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում *(չսահմանափակվելով միայն կրթական հատուկ պայմանների կարիք ունեցողներով)*, աշակերտների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում, աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում, կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունք ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի և բնականոն զարգացման նպատակով նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից առանձնացման:

Ներառական կրթական միջավայր ձևավորելու լավագույն գրավականը *համագործակցային միջավայրի* ստեղծումն է ինչպես դասարանում, այնպես էլ դասարանից դուրս, երբ կրթական գործընթացը կազմակերպվում և իրականացվում է ոչ միայն տվյալ ուսումնական առարկան դասավանդող ուսուցչի, այլև դասարանի բոլոր աշակերտների, անհրաժեշտության դեպքում նրանց ծնողների, հատուկ մանկավարժների, հոգեբանների ներգրավմամբ: Փոխօգնության սկզբունքի վրա հենված խմբային ուսուցման մեթոդների ճիշտ և նպատակային գործադրումը հնարավորություն է ընձեռում ապահովել ոչ միայն համագործակցային ուսումնական միջավայր, այլև բարձրացնում է մատուցվող ուսումնական նյութի ընկալման մակարդակը, աշակերտների միջև ձևավորում են գործնական-ուսումնական և ընկերային օբյեկտիվ հարաբերություններ. աշակերտները ճիշտ են գնահատում ոչ միայն սեփական կարողություններն ու արժանիքները, այլև համադասարանցիներինը: Սոցիալական առումով օբյեկտիվ միջաշակերտական հարաբերությունների առկայության դեպքում, երեխաները սկսում են վերաբերվել կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին ոչ թե որպես օգնություն հայցողի, այլ որպես գործընկերոջ: Ներառական կրթության իրականացման գործընթացում կարևորվում է բազմամասնագիտական թիմի

գործունեությունը: Բազմամասնագիտական թիմի մեջ ներգրավվում են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետները (դասավանդող ուսուցիչներ, դասղեկ, հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող, լոգոպեդ), երեխայի ծնողը և համակարգողը: Թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք կարող են ուղղակի ազդեցություն ունենալ երեխայի կրթության վրա: Մշակվում է երեխայի անհատական ուսուցման պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հանրակրթական ընդհանուր դպրոցում՝ անհատական ուսուցման պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրերով: Անհատական ուսուցման պլանը (ԱՈԻՊ-ը) ուղեցույց է կամ միջոց ուսուցիչների, դաստիարակների, երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների համար: Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ-ների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպելուն և նրանով հատուկ կարիքները բավարարելուն: ԱՈԻՊ-ը կազմվում է դիտման և գնահատման ադյունքների և եզրահանգումների հիման վրա: ԱՈԻՊ-ը կազմում է բազմամասնագիտական խումբը:

Եզրակացություն

Ամփոփելով հետազոտությունը՝ կարող ենք արձանագրել, որ երեխայի իրավունքների պաշտպանության ինստիտուտը սկսել է ձևավորվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Երեխաների իրավունքների պաշտպանության ժամանակակից համակարգը ձևավորվել է Միացյալ Ազգերի Կազմակերպության շրջանակներում:

Ներկայումս աշխարհի բոլոր պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը երեխաների իրավունքերի պաշտպանության ոլորտում ղեկավարվում են միջազգային կոնվենցիաներում ամրագրված դրույթներով, որոնք նախատեսվել են ազգային օրենսդրության մեջ:

Ներկայումս ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է Սահմանադրության մեջ տեղ գտած դրույթների և ազգային օրենսդրության շրջանակներում:

ՀՀ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված մի շարք դրույթներ սահմանվել են նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրական ակտերում՝ որոնք են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որում սահմանվում են երեխայի իրավունքների շրջանակը, ինչպես նաև «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը, սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանության երաշխիքները, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեով, 2005 թ. և 2015 թ. խմբագրությամբ):
2. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք. Ընդունվել է 29.05.1996:
3. Անտոնյան Մ., Գմյուր-Կարապետյան, Դուրյան Ն., Խաչատրյան Ա., Հովհաննիսյան Ա., Սարգսյան Ս.: Երեխաների պաշտպանություն. Ուսումնասիրական ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար: Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ, 2009:
4. Փիլիփոսյան Վ., Կարմիրշալյան Վ. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք/ մեկնաբանություններ. Երևան, Արեգ, 1998
5. Богусловский М. В., Користов Г. Б. Антология гуманной педагогики, - М.,1999,